



**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2024Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով
Երկուշաբթի, 30 հունիսի 2025թ., 14:05**

Մասնակցեցին՝

Բաժնետերեր

11 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ

Գագիկ Զաքարյան (նախագահ)

Հրահատ Արզումանյան

Վարդան Աթայան

Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ

Ռուբեն Ինջիկյան

Կարինե Մինասյան

Բանկի Վարչություն

Մեսրոպ Հակոբյան (նախագահ)

Արարատ Ղուկասյան

Գոհար Գրիգորյան

Օվսաննա Առաքելյան

Գուրգեն Ղուկասյան

Դավիթ Պետրոսյան

Վաղինակ Ստեփանյան

Արթուր Ապերյան

Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ

ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ Լիլիթ Օվսյան, Տիգրան Հարությունյան, Հայկ Սերգեյան
«Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերության Խորհրդի նախագահ Արմեն Հովհաննիսյան
«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի գործադիր տնօրեն Կարեն Զաքարյան
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 30.06.2025թ. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 05.06.2025թ. դրությամբ:

Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է «Ժողովուրդ» օրաթերթում և azdarar.am կայքում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին 06.06.2025թ.-ին:

Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 30.06.2025թ.-ին՝ մինչև Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 30.06.2025թ.-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 191.254.472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 173.478.820 բաժնետոմս կամ տոկոսային հարաբերությամբ 90,71%-ը:
Քվորումն ապահովված է:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը, ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին:

Նշեց, որ 2024թ. բնութագրվում է զարգացման դրական դինամիկայով, կայուն աճով և շուկայում Յունիբանկի դիրքերի ամրապնդմամբ: Միաժամանակ, Բանկը հավաստարիմ է մնացել իր ռազմավարական նպատակին՝ լինել հուսալի, ինովացիոն և հաճախորդի կարիքներին միտված ֆինանսական գործընկեր: Տարվա ֆինանսական արդյունքներով 8.2 մլրդ դրամ գումարի չափով շահույթի ապահովումը թույլ է տվել նախատեսել սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարում, որը գրեթե երկու անգամ գերազանցում է 2023թ. արդյունքներով վճարված շահութաբաժինների ծավալը: Ընդգծելով «Առողջ ֆինանսներ՝ վստահ ապագա» կարգախոսի ներքո ռազմավարության իրականացման կարևորությունը՝ **Գագիկ Զաքարյանը** նշեց, որ այդ կարգախոսի սկզբունքները Բանկի գործունեության հիմքում են, որը միտված է աջակցելու հաճախորդների կողմից գիտակցված որոշումների կայացմանը՝ հանուն ապահով ապագայի:

Նշանակալի քայլ է կատարվել թվային վերափոխման ուղղությամբ, որի շրջանակներում ստեղծվել է դրամական փոխանցումների հայաստանյան վճարահաշվարկային UBPay համակարգը, որն արդեն իսկ զբաղեցնում է շուկայի 24%-ը՝ 2027թ. վերջին 55%-ի հասցնելու հեռանկարով, զգալի առաջընթաց է գրանցվել նաև բրոքերային ծառայությունների ուղղությամբ՝ Unibank Invest ներդրումային հարթակի միջոցով դեպի միջազգային բորսաներ մուտքի հնարավորությամբ: Յունիբանկը դարձել է 2024 WEALTH Navigator Awards մրցանակաբաշխության դափնեկիր և հաղթող է ճանաչվել «ԱՊՀ երկրներում պրեմիում հաճախորդների համար լավագույն բանկ» անվանակարգում:

Շարունակելով սոցիալական ուղղության զարգացումը՝ հաշվետու տարում Յունիբանկը աջակցել է մշակույթի, սպորտի և կրթության ոլորտների, ինչպես նաև ինտելեկտուալ շարժման նախագծերին, հանդես գալով որպես «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» հեռուստախաղի մշտական հովանավոր: Նպաստելով Ֆինտեխ ոլորտում Հայաստանի դերի ամրապնդմանը՝ Յունիբանկը հերթական անգամ հանդես եկավ որպես FINTECH360 համաժողովի հովանավոր: Բանկը մասնակցել է Արցախից բռնի տեղահանված հայերի աջակցության հեռուստամարաթոնին:

Ամփոփելով՝ **Գագիկ Զաքարյանը** կիսվեց լավ լուրով. Moody's միջազգային վարկանշային գործակալությունը բարձրացրել է Յունիբանկի ավանդների երկարաժամկետ վարկանիշները մինչև B1, ինչը պայմանավորված է վերջին երկու տարիների ընթացքում վարկային պորտֆելի որակի էական բարելավմամբ և Բանկի շահութաբերության ավելացմամբ:

Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց Բանկի ղեկավարությանը և ամբողջ անձնակազմին թիմային արդյունավետ աշխատանքի համար և խոսքը փոխանցեց Վարչության նախագահին՝ օրակարգի առաջին հարցով նախատեսված հաշվետվությունը ներկայացնելու նպատակով:

Հարց 1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում:

Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ հաշվետու տարում հիմնական ուշադրությունը կենտրոնացվել էր կորպորատիվ կառավարման համակարգի հետագա կատարելագործման, ռիսկերի կառավարման համակարգի հզորացման, ներքին հսկողության արդյունավետության բարձրացման, ներդրումային ակտիվության ընդլայնման, Բանկի մասնաճյուղային ցանցի բարեկարգման և օպտիմալացման շուրջ: Հետևելով տեխնոլոգիական փոխակերպման երկարաժամկետ ռազմավարությանը՝ Բանկը նախաձեռնել էր SS ենթակառուցվածքի աստիճանական արդիականացմանը, առանցքային բիզնես գործընթացների ավտոմատացմանը, ինչպես նաև հաճախորդների հետ փոխգործակցության թվային ուղիների զարգացմանն ուղղված համալիր միջոցառումներ:

Կատարելով կապիտալի կառուցվածքի դիվերսիֆիկացման ուղղությամբ հերթական քայլը՝ հաշվետու տարվա ընթացքում Յունիբանկն իրականացրել է արժեթղթերի թողարկում և ապահովել դրանց հաջող տեղաբաշխումը շուկայում, իրականացրել է երկրի համար աննախադեպ ստորադաս պարտատոմսերի թողարկում:

Մեսրոպ Հակոբյանը ամփոփ ներկայացրեց ֆինանսական արդյունքները, մանրամասն և կորպորատիվ բիզնեսի ոլորտներում գրանցած հաջողությունները: Նշեց, որ մանրամասն ուղղությունը պահպանել է գերակշռող դիրքը բիզնեսի կառուցվածքում՝ 71% մասնաբաժնով, որին մեծապես նպաստել է հիփոթեքային պորտֆելի աճը: 2024թ. արդյունքներով Յունիբանկը դարձել է առաջատարը հայկական շուկայում POS-վարկերի քանակով՝ ճկուն պայմանների և լայն գործընկերային ցանցի շնորհիվ:

Կորպորատիվ ուղղությունը ևս դրսևորել է դրական դինամիկա, ընդ որում՝ վարկային պորտֆելի՝ 35%-ով աճի պարագայում պահպանվել է վերջինիս որակի բարձր մակարդակը: Առաջնահերթություններից մեկը շարունակում էր մնալ միկրո, փոքր և միջին բիզնեսին աջակցությունը: Հաշվի առնելով լիզինգային ֆինանսավորման գործիքների նկատմամբ մեծ հետաքրքրությունը՝ Յունիբանկը ընդլայնել է համագործակցությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ և, դառնալով լիզինգային շուկայի ակտիվ մասնակից, միացել է «Հայաստանի լիզինգատուների ասոցիացիային»:

Բանկը շարունակել է ակտիվորեն աջակցել շրջակա միջավայրի պաշտպանությանը և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանը նպաստող նախագծերին:

Վարչության նախագահը նշեց, որ 2024թ. Բանկը շարունակել է կատարելագործել կորպորատիվ կառավարման մեխանիզմները, այդ թվում՝ միջազգային KPMG ընկերության կողմից անկախ գնահատման շրջանակներում ստացված առաջարկությունների իրականացման միջոցով:

Բանկի կադրային քաղաքականությունը շարունակում էր միտված լինել պրոֆեսիոնալ և մոտիվացված թիմի ձևավորմանը և պահպանմանը: Ակտիվորեն իրականացվել են անձնակազմի որակավորման բարձրացման ծրագրեր՝ առանցքային ոլորտների ընդգրկմամբ, այդ թվում՝ ռիսկերի կառավարում, համապատասխանության հսկողություն, ներքին աուդիտ:

Որպես սահմանված բիզնես նպատակներին հասնելու հիմնական ռազմավարական ուղենիշեր **Մեսրոպ Հակոբյանը** առանձնացրեց տեխնոլոգիականությունը՝ վերլուծական գործիքների ինտեգրման, թվային միջավայրի զարգացման միջոցով, արդյունավետությունը՝ բիզնես գործընթացների օպտիմալացման և ավտոմատացման, ծախսերի կրճատման, մարժայի մեծացման միջոցով, շուկայում դիրքերի ամրապնդումը՝ հաճախորդների բազայի և գործիքակազմի ընդլայնման, արդյունավետ մարքեթինգային հաղորդակցությունների իրականացման միջոցով, ներդրումային գրավչության բարձրացումը՝ ֆինանսական կայունության ամրապնդման և արժեթղթերի արտասահմանյան շուկաներ մուտք գործելու միջոցով:

Մեսրոպ Հակոբյանը նշեց, որ որդեգրած ռազմավարության շրջանակներում Բանկն իր առջև խնդիր է դրել 2025թ. հասնել 12 մլրդ դրամ զուտ շահույթի՝ ավելացնելով 2024թ. ցուցանիշը 50%-ով:

Ավարտելով ելույթը՝ **Մեսրոպ Հակոբյանը** Բանկի Վարչության անունից շնորհակալություն հայտնեց բաժնետերերին՝ ցուցաբերած վստահության, ներգրավվածության և աջակցության համար, հաճախորդներին և գործընկերներին՝ Յունիբանկը ընտրելու համար, Բանկի անձնակազմին՝ ջանասեր աշխատանքի և տարվա արդյունքներին հասնելու ուղղությամբ իրենց ներդրման համար:

Մաղթելով բոլորին հաջողակ տարի՝ **Վարչության նախագահը** խոսքը փոխանցեց Աննա Բադոյանին՝ քվեարկության արդյունքները ներկայացնելու համար:

Բաժնետերերի ժողովը հաստատեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 173.454.980 ձայն կամ մասնակիցների ձայների 90.69%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 23.840 ձայն կամ մասնակիցների ձայների 0.01%

անվավեր՝ 99.928 ձայն

Հարց 2. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ «Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի կողմից նախնական հաստատված 2024թ. Բանկի տարեկան հաշվետվությունները՝ կազմված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հետևյալ հիմնական ցուցանիշներով՝

1. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ 51,966,052 հազ ՀՀ դրամ
2. ածանցյալ ֆինանսական ակտիվներ՝ 349 հազ ՀՀ դրամ
3. պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 18,488,095 հազ ՀՀ դրամ
4. ներդրումային արժեթղթեր՝ 33,095,191 հազ ՀՀ դրամ
5. վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր՝ 3,466,932 հազ ՀՀ դրամ
6. հաճախորդներին տրված վարկեր՝ 203,540,544 հազ ՀՀ դրամ
7. հիմնական միջոցներ՝ 10,883,232 հազ ՀՀ դրամ
8. ոչ նյութական ակտիվներ՝ 3,750,700 հազ ՀՀ դրամ
9. այլ ակտիվներ՝ 4,586,401 հազ ՀՀ դրամ
10. ընդամենը ակտիվներ՝ 336,626,868 հազ ՀՀ դրամ
11. պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 23,306,704 հազ ՀՀ դրամ
12. պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 247,536,201 հազ ՀՀ դրամ
13. թողարկված պարտքային արժեթղթեր՝ 15,085,027 հազ ՀՀ դրամ
14. փոխառություններ՝ 2,482,883 հազ ՀՀ դրամ
15. շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն՝ 578,673 հազ ՀՀ դրամ
16. այլ պարտավորություններ՝ 3,400,097 հազ ՀՀ դրամ
17. ընդամենը պարտավորություններ՝ 292,389,585 հազ ՀՀ դրամ
18. բաժնետիրական կապիտալ՝ 22,425,447 հազ ՀՀ դրամ
19. էմիսիոն եկամուտ՝ 11,279,227 հազ ՀՀ դրամ
20. գլխավոր պահուստ՝ 904,203 հազ ՀՀ դրամ
21. այլ պահուստներ՝ 1,441,732 հազ ՀՀ դրամ
22. չբաշխված շահույթ՝ 8,186,674 հազ ՀՀ դրամ
23. ընդամենը սեփական կապիտալ՝ 44,237,283 հազ ՀՀ դրամ
24. ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ՝ 336,626,868 հազ ՀՀ դրամ

Եկամուտների և ծախսերի կառուցվածքը՝

- զուտ տոկոսային եկամուտներ՝ 18,293,874 հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտներ՝ 2,766,510 հազ ՀՀ դրամ
- զուտ գործառնական եկամուտ՝ 29,555,789 հազ ՀՀ դրամ
- շահույթ մինչև հարկումը՝ 11,022,441 հազ ՀՀ դրամ
- շահութահարկի գծով ծախս՝ (2,794,531) հազ ՀՀ դրամ
- տարվա շահույթ՝ 8,227,910 հազ ՀՀ դրամ

Դրամական միջոցների շարժը՝

- դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները՝ 13,810,920 հազ ՀՀ դրամ
- զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից՝ 5,075,239 հազ ՀՀ դրամ
- զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից՝ (2,098,146) հազ ՀՀ դրամ
- զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից՝ (1,144,936) հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում՝ (1,957,890) հազ ՀՀ դրամ
- արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ (1,745,088) ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեկան դրությամբ՝ 55,669,030 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի տարեկան դրությամբ՝ 51,966,052 հազ ՀՀ դրամ

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ համաձայն «Գրանթ Թորնթոն» անկախ աուդիտորական ընկերության եզրակացության, Բանկի ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների:

Ժողովը հաստատեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. ֆինանսական հաշվետվությունները՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 173.454.980 ձայն կամ մասնակիցների ձայների 90.69%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 23.840 ձայն կամ մասնակիցների ձայների 0.01%

անվավեր՝ 99.928 ձայն

Հարց 3. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի 2024թ. հաշվետվության հաստատում: Բանկի ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:

Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասովը հայտնեց, որ հաշվետու տարում Ներքին աուդիտի ստորաբաժանման թիմը հզորացվել է քանակական կազմի ընդլայնման, ինչպես նաև միջազգային հավաստագրման և մասնագիտական վերապատրաստման շնորհիվ:

Ներկայացնելով իրականացված ստուգումների ուղղությունները՝ **Արթուր Ղուկասովը** նշեց, որ աուդիտն իրականացվել է ինչպես տարեկան աշխատանքային պլանի համաձայն, այնպես էլ արտապլանային, մասնավորապես՝ թվով 7 մասնաճյուղում իրականացվել է համապարփակ ստուգում, թվով 28 մասնաճյուղում կատարվել են նպատակային ստուգումներ ըստ ոլորտների, գլխամասային գրասենյակում իրականացվել է գործունեության տարբեր ոլորտների աուդիտ, այդ թվում՝ ներքին ընթացակարգերի և կարգավորող պահանջների պահպանման մասով, բիզնես գործընթացների շարունակականության կառավարման վերլուծություն, մարդկային ռեսուրսների կառավարման գործունեության, ինչպես նաև ներքին հսկողության պահանջներին համապատասխանության գնահատում, 100 մլն դրամ և ավելի գումարի չափով բիզնես վարկերի և 50 մլն դրամ և ավելի գումարի չափով հիփոթեքային և սպառողական վարկերի նպատակային ստուգում, ներառյալ՝ դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում, Համապատասխանության տնօրինության գործառնությունների արդյունավետության գնահատում, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ստուգում, արտաքին և ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների վերացման մասով հետստուգում:

Հայտնաբերված խնդիրների վերացման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր, որոնց կատարման նկատմամբ իրականացվում է հետևողական հսկողություն:

Ներկայացնելով Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ Ներքին աուդիտի կարծիքի հիմքում ընկած միջոցառումները՝ **Արթուր Ղուկասովը** ամփոփեց, որ Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 173.431.140 ձայն կամ մասնակիցների ձայների 90.68%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 47.680 ձայն կամ մասնակիցների ձայների 0.02%

անվավեր՝ 99.928 ձայն

Հարց 4. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:

Գագիկ Զաքարյանը տեղեկացրեց, որ 27.05.2025թ. Բանկի Խորհրդի որոշմամբ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին են ներկայացվում Խորհրդի ընտրության վերաբերյալ հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի,
- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Հրահատ Արզումանյանին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտին (անկախ), Ռուբեն Ինջիկյանին (անկախ), Կարինե Մինասյան (անկախ):

Քվեարկության արդյունքներով թեկնածուները ստացել են ձայների հետևյալ քանակը.

Գագիկ Զաքարյան՝ 25.580.025 ձայն
 Գեորգի Պիսկով՝ 25.298.714 ձայն
 Հրահատ Արզումանյան՝ 24.229.210 ձայն
 Վարդան Աթայան՝ 24.783.796 ձայն
 Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ՝ 24.224.634 ձայն
 Ռուբեն Ինջիկյան՝ 24.206.876 ձայն
 Կարինե Մինասյան՝ 24.260.763 ձայն

Դեմ՝ 4 ձայն

Թեկնածուների գծով ձեռնպահ՝ 650.350 ձայն

Անվավեր՝ 344.376 ձայն

Բաժնետերերի ժողովը որոշեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի, վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Հրահատ Արզումանյանին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտին (անկախ), Ռուբեն Ինջիկյանին (անկախ), Կարինե Մինասյան (անկախ):

Հարց 5. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով Բանկի 2024թ. գործունեության ֆինանսական արդյունքները, 27.05.2025թ. Բանկի Խորհրդի որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 7,777,340,300 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով, մեկ բաժնետոմսի մասով 40,66 ՀՀ դրամ հաշվարկով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 01.07.2025թ.-ից մինչև 31.07.2025թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2024թ. զուտ շահույթի 5%-ը:

Հաշվի առնելով Բանկի 2024թ. գործունեության ֆինանսական արդյունքները՝ բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշեց՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 7,777,340,300 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով, մեկ բաժնետոմսի մասով 40,66 ՀՀ դրամ հաշվարկով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 01.07.2025թ.-ից մինչև 31.07.2025թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2024թ. զուտ շահույթի 5%-ը:

Կողմ՝ 173.431.140 ձայն կամ մասնակիցների ձայների 90.68%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 47.680 ձայն կամ մասնակիցների ձայների 0.02%

անվավեր՝ 99.928 ձայն

Հարց 6. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025-2026թթ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան 2025թ. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որում հաղթող է ճանաչվել «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն:

27.05.2025թ. Բանկի Խորհրդի որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն որպես «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025-2026թթ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձ:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, հաստատեց «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն որպես «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025-2026թթ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձ.

կողմ՝ 173.431.140 ձայն կամ մասնակիցների ձայների 90.68%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 47.680 ձայն կամ մասնակիցների ձայների 0.02%

անվավեր՝ 99.928 ձայն

Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց «Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերությանը մատուցված ծառայությունների բարձր որակի և երկարամյա կառուցողական համագործակցության համար: **Մեսրոպ Հակոբյանը** նույնպես նշեց «Գրանթ Թորնթոն» ընկերության հետ համագործակցության արդյունավետությունը: «Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերության Խորհրդի նախագահ **Արմեն Հովհաննիսյանը** փոխադարձ շնորհակալություն հայտնեց Յունիբանկի ղեկավարությանը երկարատև արդյունավետ համագործակցության համար, հատկապես ընդգծելով Բանկի կողմից ցուցաբերված թափանցիկությունը ամուր գործընկերային հարաբերություններ կառուցելու գործում, և պատրաստակամություն հայտնեց շարունակելու հաղորդակցությունը նաև հետագայում:

Հարց 7. Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի միացում:

Նախագծերի և ստանդարտների ներդրման գծով Վարչության նախագահի տեղակալ Վաղինակ Ստեփանյանը ներկայացրեց, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. թիվ 1955-Ն հրամանով հաստատվել է Կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը, որի նպատակն է կառավարման արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը, ներդրողների վստահության ամրապնդումը, գործարար միջավայրի զարգացումը:

Կանոնակարգին միանալը պարտադիր է Հայաստանի Ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությունների համար, որի վերաբերյալ որոշում ընդունելու իրավասությունը պատկանում է բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Կանոնագրքին միացող կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար պատրաստել և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը իր կայքէջում հրապարակել Կանոնագրքով նախատեսված տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև դրա մաս կազմող կորպորատիվ կառավարման զեկույցը և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը՝ «Հետևի՛ր կամ բացատրի՛ր» սկզբունքի հիման վրա:

Բանկի 27.05.2025թ. Խորհրդի որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի միանալու առաջարկը:

Բաժնետերերի ժողովը որոշեց հաստատել Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքին «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի միացումը՝ քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 173.431.140 ձայն կամ մասնակիցների ձայների 90.68%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 47.680 ձայն կամ մասնակիցների ձայների 0.02%

անվավեր՝ 99.928 ձայն

Հարց 8. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխման ձևի սահմանում:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 27.05.2025թ. Խորհրդի որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է Բանկի բաժնետոմսերի բոլոր հաջորդող լրացուցիչ թողարկումների տեղաբաշխումն իրականացնել բաց բաժանորդագրության միջոցով, եթե տեղաբաշխման այլ ձև չնախատեսվի բաժնետերերի ժողովի կողմից:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշեց Բանկի բաժնետոմսերի բոլոր հաջորդող լրացուցիչ թողարկումների տեղաբաշխումն իրականացնել բաց բաժանորդագրության միջոցով.

Կողմ՝ 172.780.767 ձայն կամ մասնակիցների ձայների 90.34%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 698.028 ձայն կամ մասնակիցների ձայների 0.36%

անվավեր՝ 99.928 ձայն

Աննա Բադոյանը հայտարարեց, որ ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են:

Ժողովի նախագահ Գարիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց բոլորին մասնակցության համար և առաջարկեց ցանկացողներին տալ հարցեր: Հարցեր չինչեցին:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 15:00-ին:

Գաբիկ Զաքարյան
Նախագահ

Աննա Բադոյան
Քարտուղար

ք. Երևան, 1 հուլիսի 2025թ.



**ПРОТОКОЛ
ГОДОВОГО ОБЩЕГО СОБРАНИЯ АКЦИОНЕРОВ
ОАО «YUNIBANK» 2024г.**

В форме совместного присутствия в режиме реального времени с помощью приложения Zoom
Понедельник, 30 июня 2025 года, 14:05

Присутствовали:

Акционеры

11 акционеров на момент открытия заседания

Совет Банка

Гагик Закарян (председатель)
Граат Арзуманян
Вардан Атаян
Филипп Рене Марк Делмотт
Рубен Инджикян
Каринэ Минасян

Правление Банка

Месроп Акопян (председатель)
Арарат Гукасян
Гоар Григорян
Овсання Аракелян
Гурген Гукасян
Давид Петросян
Вагинак Степанян
Артур Аперян
Сергей Кочарян

Приглашенные

Представители Центрального банка РА Лилит Овсян, Тигран Арутюнян, Айк Сергеев
Председатель Совета ЗАО «Грант Торнтон» Армен Оганнисян
Исполнительный директор «Финарм» Ассоциации участников финансового рынка Карен Закарян
Руководители структурных подразделений Банка

Секретарем Собрании была назначена председатель Счетной комиссии Анна Бадоян.

Анна Бадоян представила, что голосование годового общего собрания акционеров ОАО «YUNIBANK» 30.06.2025г. осуществлено посредством бюллетеней. Список акционеров, имеющих право на участие на Собрании, составлен на 05.06.2025г.

Объявление о созыве Собрании было надлежащим образом размещено на официальном сайте Банка, опубликовано в газете «Жогувурд» и на сайте azdarar.am, уведомления вместе с бюллетенями голосования были отправлены акционерам 06.06.2025г.

Прием заполненных бюллетеней по вопросам повестки дня был завершен 30.06.2025г., до момента окончания регистрации участников Собрании. Протокол Счетной комиссии составлен 30.06.2025г.

Суммарное количество голосов размещенных голосующих обыкновенных акций Банка составило 191.254.472 штуки, из которых в голосовании приняли участие 173.478.820 акций, имеющих право голоса, или в процентном соотношении 90,71%.

Кворум обеспечен.

Председатель Собрании Гагик Закарян открыл заседание и поприветствовал всех акционеров и гостей.

Отметил, что 2024г. характеризуется положительной динамикой развития, стабильным ростом и укреплением позиций

Юнибанка на рынке. Банк при этом сохранял приверженность своей стратегической цели - быть надежным, инновационным и клиентоориентированным финансовым партнером. Финансовые итоги года с размером прибыли в 8.2 млрд драм позволили предусмотреть дивидендные выплаты по обыкновенным акциям, почти вдвое превышающие объем дивидендов, распределенных по итогам 2023г. Подчеркнув значимость реализации стратегии под девизом “Здоровые финансы – надежное будущее”, **Гагик Закарян** отметил, что принципы данного девиза легли в основу деятельности Банка, предполагающей содействие принятию клиентами осознанных решений на благо их надежного будущего.

Был проделан значительный шаг в направлении цифровой трансформации, в рамках которой была создана армянская система денежных переводов UBPay, которая уже занимает 24% рынка с перспективой ее расширения до 55% к 2027г., значительный прогресс отмечен в направлении брокерских услуг с возможностью выхода на международные биржи через инвестиционный портал Unibank Invest. Юнибанк стал лауреатом премии WEALTH Navigator Awards 2024 и признан победителем в номинации “Лучший банк для состоятельных частных клиентов в странах СНГ”.

Продолжая развитие социального направления, Юнибанк в течение года поддерживал проекты в сферах культуры, спорта и образования, а также интеллектуального движения, выступая постоянным спонсором игры “Что? Где? Когда?”. Способствуя укреплению роли Армении в финтех-сфере, Юнибанк в очередной раз стал традиционным спонсором конференции FINTECH360. Банк выступил участником телемарафона в поддержку армян, насильственно переселенных из Арцаха.

В заключение выступления **Гагик Закарян** поделился хорошей новостью о повышении международным рейтинговым агентством Moody's долгосрочных рейтингов депозитов Юнибанка до уровня B1, что было обусловлено существенным улучшением качества кредитного портфеля и увеличением прибыльности Банка за последние два года.

Гагик Закарян выразил благодарность руководству и всему коллективу Банка за эффективную командную работу и передал слово председателю Правления для презентации отчета по первому вопросу повестки дня.

Вопрос 1. Утверждение годового отчета Правления о деятельности ОАО “ЮНИБАНК” за 2024г.

Председатель Правления Месроп Акопян представил годовой отчет Правления о деятельности ОАО “ЮНИБАНК” за 2024г. Отметил, что в отчетном году основное внимание было сосредоточено на дальнейшем совершенствовании системы корпоративного управления, усилении системы управления рисками, повышении эффективности внутреннего контроля, расширении инвестиционной активности, благоустройстве и оптимизации филиальной сети Банка. Следуя долгосрочной стратегии технологической трансформации, Банк инициировал комплекс мероприятий по поэтапной модернизации ИТ-инфраструктуры, автоматизации ключевых бизнес-процессов, развитию цифровых каналов взаимодействия с клиентами.

Сделав очередной шаг в диверсификации структуры капитала, в течение отчетного года Юнибанк осуществлял эмиссию ценных бумаг и обеспечивал их успешное размещение на рынке, провел беспрецедентный для страны выпуск субординированных облигаций.

Месроп Акопян представил обзор финансовых результатов, достигнутых успехов в сфере розничного и корпоративного бизнеса. Отметил, что розничное направление сохраняло доминирующее положение в структуре бизнеса с долей в 71%, чему в значительной степени способствовал рост ипотечного портфеля. По итогам 2024г., Юнибанк стал лидером рынка Армении по количеству POS-кредитов за счет гибких условий и широкой партнерской сети.

Корпоративное направление также демонстрировало положительную динамику, при этом при приросте кредитного портфеля на 35% сохранился высокий уровень его качества. Одним из приоритетов оставалась поддержка микро, малого и среднего бизнеса. Учитывая высокий интерес к инструментам лизингового финансирования, Юнибанк расширил сотрудничество с министерством экономики Армении и, став активным участником лизингового рынка, вступил в “Ассоциацию лизингодателей РА”.

Банк продолжал активно поддерживать проекты, способствующие охране окружающей среды и внедрению энергоэффективных технологий.

Председатель Правления отметил, что в 2024г. Банк продолжил совершенствовать механизмы корпоративного управления, в том числе за счет реализации рекомендаций, полученных в рамках независимой оценки со стороны международной компании KPMG.

Кадровая политика Банка оставалась ориентированной на формирование и сохранение профессиональной и мотивированной команды. Активно реализовывались программы повышения квалификации персонала с охватом ключевых направлений, включая управление рисками, комплаенс-контроль, внутренний аудит.

Основными стратегическими ориентирами для достижения поставленных бизнес-целей **Месроп Акопян** выделил технологичность через интеграцию аналитических инструментов, развитие цифровой среды; эффективность через оптимизацию и автоматизацию бизнес-процессов, снижение издержек и повышение маржинальности; усиление позиций на рынке через расширение клиентской базы и продуктовой линейки, проведение эффективных маркетинговых коммуникаций; повышение инвестиционной привлекательности за счет укрепления финансовой устойчивости и выход

на иностранные рынки ценных бумаг.

Месроп Акопян отметил, что в рамках выбранной стратегии Банк поставил перед собой задачу добиться в 2025г. показателя чистой прибыли в 12 млрд драм, с увеличением показателя за 2024г. на 50%.

В заключение выступления **Месроп Акопян** от имени Правления Банка выразил благодарность акционерам за проявленное доверие, вовлеченность и поддержку, клиентам и партнерам - за их выбор Юнибанка, команде Банка – за усердную работу и вклад в достижение результатов года.

Пожелав успешного года всем, председатель Правления передал слово Анне Бадоян для представления результатов голосования.

Собрание акционеров утвердило годовой отчет Правления о деятельности ОАО «ЮНИБАНК» за 2024г. по следующим итогам голосования:

за – 173.454.980 голосов или 90.69% голосов участников

против - 0 голосов

воздержался - 23.840 голосов или 0.01% голосов участников

недействительных - 99.928 голосов

Вопрос 2. Утверждение финансовых отчетов ОАО «ЮНИБАНК» за 2024г. Заключение аудиторской компании «Грант Торнтон» о финансовых отчетах ОАО «ЮНИБАНК» за 2024г.

Член Правления, Финансовый директор - Главный бухгалтер Гоар Григорян представила предварительно утвержденные Советом годовые отчеты Банка за 2024г. со следующими основными показателями по международным стандартам финансовой отчетности:

1. денежные средства и их эквиваленты – 51,966,052 тыс. драм РА
2. финансовые производные активы - 349 тыс. драм РА
3. требования к финансовым организациям – 18,488,095 тыс. драм РА
4. инвестиционные ценные бумаги – 33,095,191 тыс. драм РА
5. инвестиционные ценные бумаги, заложенные по договорам купли-продажи и выкупа – 3,466,932 тыс. драм РА
6. выданные клиентам кредиты – 203,540,544 тыс. драм РА
7. основные средства – 10,883,232 тыс. драм РА
8. нематериальные активы – 3,750,700 тыс. драм РА
9. прочие активы – 4,586,401 тыс. драм РА
10. итого активы – 336,626,868 тыс. драм РА
11. обязательства перед финансовыми организациями – 23,306,704 тыс. драм РА
12. обязательства перед клиентами – 247,536,201 тыс. драм РА
13. выпущенные банком долговые ценные бумаги – 15,085,027 тыс. драм РА
14. обязательства по займам – 2,482,883 тыс. драм РА
15. обязательство по текущему налогу на прибыль – 578,673 тыс. драм РА
16. прочие обязательства – 3,400,097 тыс. драм РА
17. итого обязательства – 292,389,585 тыс. драм РА
18. акционерный капитал – 22,425,447 тыс. драм РА
19. эмиссионный доход – 11,279,227 тыс. драм РА
20. главный резерв – 904,203 тыс. драм РА
21. прочие резервы – 1,441,732 тыс. драм РА
22. нераспределенная прибыль – 8,186,674 тыс. драм РА
23. итого собственный капитал – 44,237,283 тыс. драм РА
24. итого обязательства и собственный капитал – 336,626,868 тыс. драм РА

Структура доходов и расходов:

- чистые процентные доходы – 18,293,874 тыс. драм РА
- чистые комиссионные и прочие доходы – 2,766,510 тыс. драм РА
- чистый операционный доход - 29,555,789 тыс. драм РА
- прибыль до налогообложения – 11,022,441 тыс. драм РА
- налог на прибыль – (2,794,531) тыс. драм РА
- прибыль за год – 8,227,910 тыс. драм РА

Движение денежных средств:

- денежные потоки до изменений в операционных активах и обязательствах – 13,810,920 тыс. драм РА
- чистые денежные потоки от операционной деятельности – 5,075,239 тыс. драм РА
- чистые денежные потоки от инвестиционной деятельности – (2,098,146) тыс. драм РА
- чистые денежные потоки от финансовой деятельности – (1,144,936) тыс. драм РА
- чистый отток денежных средств и их эквивалентов - (1,957,890) тыс. драм РА

- влияние курсовых разниц на денежные средства и их эквиваленты - (1,745,088) тыс. драм РА
- денежные средства и их эквиваленты на начало года - 55,669,030 тыс. драм РА
- денежные средства и их эквиваленты на конец года – 51,966,052 тыс. драм РА

Гоар Григорян представила, что согласно заключению независимой аудиторской компании “Грант Торнтон”, финансовые отчеты Банка достоверно отражают финансовое положение открытого акционерного общества “ЮНИБАНК” по состоянию на 31 декабря 2024г., а также финансовые результаты его деятельности и движение денежных средств за год, закончившийся на указанную дату, в соответствии с требованиями международных стандартов финансовой отчетности.

Собрание акционеров утвердило финансовые отчеты ОАО “ЮНИБАНК” за 2024г. по следующим итогам голосования:

за – 173.454.980 голосов или 90.69% голосов участников
против - 0 голосов
воздержался - 23.840 голосов или 0.01% голосов участников
недействительных - 99.928 голосов

Вопрос 3. Утверждение отчета Внутреннего аудита за 2024г. Заключение Внутреннего аудита о системе внутреннего контроля ОАО “ЮНИБАНК”.

Директор Внутреннего аудита Артур Гукасов сообщил, что в отчетном году команда подразделения Внутреннего аудита была усилена за счет расширения численного состава и прохождения международной сертификации и профильного обучения.

Представив направления проведенных проверок, **Артур Гукасов** отметил, что аудит осуществлялся как в соответствии с годовым рабочим планом, так и внепланово, в частности, была проведена комплексная проверка в 7-ми филиалах, в 28-ми филиалах – целевые проверки по отраслям, в центральном офисе был проведен аудит разных сфер деятельности, в том числе на предмет соблюдения внутренних процедур и регуляторных требований, анализ управления непрерывностью бизнес процессов, оценка деятельности управления персоналом, а также соответствия требованиям внутреннего контроля, целевая проверка бизнес кредитов на сумму свыше 100 млн драм и ипотечных и потребительских кредитов на сумму свыше 50 млн драм, в том числе оценка достоверности сформированных по ним резервов, оценка эффективности функции Дирекции по комплаенс, проверка мер по борьбе с отмыванием денег и финансированием терроризма, перепроверка на предмет устранения выявленных проблем, представленных в отчетах Внешнего и Внутреннего аудита.

По устранению выявленных проблем и несоответствий были составлены планы мероприятий, за исполнением которых осуществлялся последовательный контроль.

Представив мероприятия, на которых основано мнение Внутреннего аудита об эффективности организации системы внутреннего контроля Банка, **Артур Гукасов** заключил, что система внутреннего контроля Банка соответствует минимальным требованиям, установленным центральным банком Республики Армения.

Собрание акционеров утвердило отчет Внутреннего аудита ОАО “Юнибанк” за 2024г. по следующим итогам голосования:

за – 173.431.140 голосов или 90.68% голосов участников
против - 0 голосов
воздержался - 47.680 голосов или 0.02% голосов участников
недействительных - 99.928 голосов

Вопрос 4. Избрание членов Совета и утверждение количественного состава Совета ОАО “ЮНИБАНК”.

Гагик Закарян сообщил, что решением Совета Банка от 27.05.2025г. годовому общему собранию акционеров представляются следующие предложения о выборах в Совет:

- количественный состав Совета утвердить семь человек,
- переизбрать членов Совета Гагика Закаряна, Георгия Пискова, Граата Арзуманяна, Вардана Атаяна, Филиппа Рене Марка Делмотта (независимый), Рубена Инджикяна (независимый), Каринэ Минасян (независимый).

По итогам голосования, кандидаты получили следующее количество голосов:

Гагик Закарян – 25.580.025 голосов
 Георгий Писков – 25.298.714 голосов
 Граат Арзуманян – 24.229.210 голосов
 Вардан Атаян – 24.783.796 голосов
 Филипп Рене Марк Делмотт – 24.224.634 голоса
 Рубен Инджикян – 24.206.876 голосов
 Каринэ Минасян - 24.260.763 голоса

Против – 4 голоса
Воздержались по кандидатам – 650.350 голосов
Недействительных – 344.376 голосов

Собрание акционеров приняло решение количественный состав Совета утвердить семь человек, переизбрать членов Совета Гагика Закаряна, Георгия Пискова, Граата Арзуманяна, Вардана Атаяна, Филиппа Рене Марка Делмотта (независимый), Рубена Инджикяна (независимый), Каринэ Минасян (независимый).

Вопрос 5. Решение о выплате годовых дивидендов по финансовым результатам ОАО “ЮНИБАНК” за 2024г.

Гагик Закарян представил, что, учитывая финансовый результат деятельности ОАО “ЮНИБАНК” за 2024г., общему собранию акционеров решением Совета Банка от 27.05.2025г. предлагается:

- из накопленной прибыли Банка выплатить годовые дивиденды по обыкновенным именным акциям в денежной форме на общую сумму 7,777,340,300 драм РА, из расчета 40,66 драм РА по одной акции,
- выплату годовых дивидендов осуществить в срок с 01.07.2025г. до 31.07.2025г. владельцам обыкновенных именных акций, которые включены в реестр участников Банка по состоянию на дату составления списка акционеров, имеющих право на участие в годовом общем собрании,
- в резервный фонд выделить 5% от чистой прибыли Банка за 2024г.

Учитывая финансовый результат деятельности Банка за 2024г., по следующим итогам голосования собрание акционеров приняло решение:

- из накопленной прибыли Банка выплатить годовые дивиденды по обыкновенным именным акциям в денежной форме на общую сумму 7,777,340,300 драм РА, из расчета 40,66 драм РА по одной акции,
- выплату годовых дивидендов осуществить в срок с 01.07.2025г. до 31.07.2025г. владельцам обыкновенных именных акций, которые включены в реестр участников Банка по состоянию на дату составления списка акционеров, имеющих право на участие в годовом общем собрании,
- в резервный фонд выделить 5% от чистой прибыли Банка за 2024г.

за – 173.431.140 голосов или 90.68% голосов участников
против - 0 голосов
воздержался - 47.680 голосов или 0.02% голосов участников
недействительных – 99.928 голосов

Вопрос 6. Утверждение лица для проведения внешнего аудита финансовой деятельности ОАО “ЮНИБАНК” за 2025-2026гг.

Месроп Акопян представил, что, в соответствии с требованиями законодательства РА, с целью избрания независимой аудиторской компании для осуществления внешнего аудита годовых финансовых отчетов Банка 2025г., Банком был объявлен конкурс, в котором победителем было признано ООО “КЕЙ-ПИ-ЭМ-ДЖИ АРМЕНИЯ”.
Решением Совета Банка от 27.05.2025г. на утверждение общего собрания акционеров Банка представляется ООО “КЕЙ-ПИ-ЭМ-ДЖИ АРМЕНИЯ” в качестве компании для осуществления внешнего аудита финансовой деятельности Банка в 2025- 2026гг.

Собрание акционеров по следующим итогам голосования утвердило ООО “КЕЙ-ПИ-ЭМ-ДЖИ АРМЕНИЯ” в качестве компании для осуществления внешнего аудита финансовой деятельности Банка в 2025- 2026гг.:

за – 173.431.140 голосов или 90.68% голосов участников
против - 0 голосов
воздержался - 47.680 голосов или 0.02% голосов участников
недействительных - 99.928 голосов

Гагик Закарян выразил благодарность компании “Грант Торнтон” за высокое качество предоставленных услуг и конструктивное взаимодействие на протяжении многих лет. **Месроп Акопян** также отметил продуктивность сотрудничества с компанией “Грант Торнтон”. Председатель Совета ЗАО “Грант Торнтон” **Армен Оганнисян** выразил ответную благодарность руководству Юнибанка за долгие годы плодотворного сотрудничества, особо подчеркнув проявленную Банком прозрачность в построении прочных партнерских отношений, и выразил готовность к дальнейшему поддержанию коммуникации.

Вопрос 7. Присоединение ОАО “ЮНИБАНК” к Кодексу корпоративного управления Республики Армения.

Заместитель председателя Правления по внедрению проектов и стандартов Вагинак Степанян представил, что приказом министра экономики РА от 30.07.2024г. N 1955-Ն утвержден новый Кодекс корпоративного управления, целью которого является повышение эффективности, прозрачности и отчетности управления, укрепление доверия инвесторов, развитие деловой среды.
Присоединение к Кодексу является обязательным для компаний, котирующихся на Фондовой бирже Армении, принятие

решения о котором является полномочием общего собрания акционеров. Организация, присоединившаяся к Кодексу, обязана для каждого финансового года подготовить и до 30-го июня года, следующего за отчетным, на своем сайте опубликовать предусмотренный Кодексом годовой отчет, а также являющийся его частью доклад о корпоративном управлении и годовую декларацию корпоративного управления по принципу “Соблюдай или объясни”.

Решением Совета Банка от 27.05.2025г. на утверждение общего собрания акционеров Банка представляется предложение о присоединении ОАО “ЮНИБАНК” к Кодексу корпоративного управления Республики Армения.

Собрание акционеров, по следующим итогам голосования, приняло решение присоединиться к Кодексу корпоративного управления Республики Армения:

за – 173.431.140 голосов или 90.68% голосов участников
против - 0 голосов
воздержался - 47.680 голосов или 0.02% голосов участников
недействительных - 99.928 голосов

Вопрос 8. Установление формы размещения дополнительного выпуска акций ОАО “ЮНИБАНК”.

Председатель Правления Месроп Акопян представил, что решением Совета Банка от 27.05.2025г. на утверждение общего собрания акционеров Банка предлагается размещение всех последующих дополнительных выпусков акций Банка осуществлять путем открытой подписки, если иная форма размещения не будет предусмотрена собранием акционеров.

Собрание акционеров, по следующим итогам голосования, приняло решение размещение всех последующих дополнительных выпусков акций Банка осуществлять путем открытой подписки, если иная форма размещения не будет предусмотрена собранием акционеров:

за – 172.780.767 голосов или 90.34% голосов участников
против - 0 голосов
воздержался – 698.028 голосов или 0.36% голосов участников
недействительных - 99.928 голосов

Анна Бадоян объявила о том, что все вопросы повестки дня собрания рассмотрены, решения по ним приняты.

Председатель Собрания Гагик Закарян поблагодарил всех за участие и предложил желающим задать вопросы. Вопросов не прозвучало.

Собрание акционеров завершилось в 15:00.

Гагик Закарян
Председатель

Анна Бадоян
Секретарь

г. Ереван, 1 июля 2025г.